ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 02-ից հոկտեմբերի 6-ը ներառյալ Լիտվայի Հանրապետության գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝**

Լուսինե Ամիրխանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության, օդային տրանսպորտի քաղաքականության աժնի գլխավոր մասնագետ:

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2023թ. սեպտեմբերի 28-ի N 1993-Ա հրամանի համաձայն 2023 թվականի հոկտեմերի 02-ից հոկտեմերի 6-ը ներառյալ գործուղվել եմ Լիտվայի Հանրապետություն, քաղաք Վիլնյուս:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**

Լիտվայի տրանսպորտային անվտանգության գործակալության:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

«Անվտանգ տրանսպորտային համակարգ Հայաստանում» ծրագրի շրջանակներում մասնակցել եմ քաղաքացիական ավիացիայի ոլորտի փորձի փոխանակման գործնական աշխատանքների ուսումնասիրությանը և քննարկումներին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումների ընթացքում տեղի են ունեցել ավիացիոն ոլորտի մի շարք կարևոր ուղղությունների, օրինակ՝ ավիացիոն անվտանգության, թռիչքների թույլտվությունների տրամադրման, աերոդրոմների սերտիֆիկացման, թռիչքային պիտանիության և ուղևորների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործնական աշխատանքների ուսումնասիրություն և քննարկումներ:

Օրակարգում ներառված էին նաև ներկայումս պատժամիջոցների համատեքստում կանոնավոր և ոչ կանոնավոր թռիչքների թույլտվությունների համար կիրառվող ընթացակարգերի ներկայացումը, ինչպես նաև ուղևորների իրավունքների պաշտպանության համար կիրառվող ԵՄ պահանջները: Ցուցադրվել և հայկական կողմին են փոխանցվել են մի շարք աշխատանքային և գործող օրենսդրական փաստաթղթեր, կանոնակարգեր, թռիչքների թույլտվությունների և աերոդրոմների սերտիֆիկացման համար օգտագործվող ձևանմուշներ, որոնց ուսումնասիրությունը կնպաստի տեղեկան օրենսդրական դաշտի բարեփոխումներին:

Դասերն անցկացվել են Վիլնյուս քաղաքում, Լիտվայի տրանսպորտային անվտանգության գործակալությունում:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.

Հանդիպումների մասնակցում էին Լիտվայի տրանսպորտիային անվտանգության գործակալության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ ՏԿԵՆ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ներկայացուցիչները: Ընդհանուր առմամբ վերոգրյալ աշխատանքներին և քննարկումներին մասնակցել են և ելույթով ներկայացել են 10 ներկայացուցիչ:

Հանդիպումների ընթացքում բազմիցս նշվել է նաև, որ տվյալ հանդիպումները նպաստում են երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

Լուսինե Ամիրխանյան
09.10.2023թ.